

Որակի  
հոչակագիր

**Ֆինանսական կազմակերպությունների հատված**

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ֆինանսական կազմակերպությունների հատված
0.2	Ոլորտը	Պետական ֆինանսներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Ֆինանսների վիճակագրության բաժին Բաժնի պետ Հայկուշ Տիտիզյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 049, +374 11 523 904 Էլ. փոստ՝ <a href="mailto:haykush@armstat.am">haykush@armstat.am</a> , <a href="mailto:info@armstat.am">info@armstat.am</a>
0.4	Նպատակը և պատմությունը	Միասնական և համակարգված ձևով օգտագործողներին տրամադրել վիճակագրական տեղեկատվություն ֆինանսական հաստատությունների հատվածի վերաբերյալ:  Այս հատվածի վիճակագրությունը վարվում է 20-րդ դարի 90-ական թվականների սկզբից:  Վիճակագրությունը վարվում է ԱՄՀ –ի «Դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն» ձեռնարկի մեթոդաբանությամբ, որի հիմնական հասկացությունները համաձայնեցված են «Ազգային հաշիվների համակարգ 1993» ձեռնարկի հասկացություններին:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն:  Ցուցանիշները թույլ են տալիս վերլուծել և գնահատել երկրի ֆինանսական հատվածի գործունեությունը, մշակել դրամավարկային և ֆինանսական քաղաքականությունը, գնահատել ֆինանսական կայունությունը:
0.6	Տեղեկությունների	Տեղեկատվության աղբյուրը է հանդիսանում որպես

	աղբյուրները	<p>վարչական ռեգիստր համարվող ՀՀ կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից Արմստատ տրամադրվող տեղեկանքները:</p> <p>Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունը ԿԲ կողմից կազմվում է ինչպես ԿԲ-ի տվյալների, այնպես էլ ԿԲ-ին հաշվետու սուբյեկտներից ստացված հաշվետվությունների հիման վրա: Բացի այդ, ՀՀ ԿԲ-ին հաշվետու սուբյեկտների (ՀՀ ֆինանսական համակարգի բոլոր սուբյեկտները) հաշվետվությունների հիման վրա կազմվում և Արմստատին է տրամադրվում ֆինանսական համակարգի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:</p>
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի և Արմստատի միջև կնքված տեղեկատվության փոխանակման համաձայնագրի հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
<b>1 Բովանդակություն</b>		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>«Ֆինանսական կազմակերպություններ» հատվածը ներառում է ֆինանսական միջնորդությամբ և / կամ օժանդակ ֆինանսական գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպությունները: Ֆինանսական միջնորդության դեպքում ինստիտուցիոնալ միավորը ձեռք է բերում ֆինանսական ակտիվներ և իրականացնելով շուկայում ֆինանսական գործառնություններ միևնույն ժամանակ իր անունից ընդունում է պարտավորություններ:</p> <p>Օժանդակ ֆինանսական գործունեությունը սերտորեն կապված է ֆինանսական միջնորդության հետ, թեև այն ֆինանսական միջնորդություն չի համարվում:</p>

		<p>Օժանդակ ֆինանսական գործունեությունը ներառում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հետ գործառնությունների իրացման կամ ֆինանսական միջոցների փոխակերպման (վերագրանցման) օժանդակ ֆինանսական գործունեությունը: Ակտիվների ձեռք բերման կամ պարտավորությունների ընդունման հետ կապված օժանդակ ֆինանսական կազմակերպությունները չեն ենթարկվում ռիսկի և միայն օժանդակում են ֆինանսական միջնորդությանը:</p> <p>Ֆինանսական միջնորդության գործընթացների արդյունքում ռեսուրսները տեղաշարժվում են երրորդ կողմերի՝ միջոցների ավելցուկ և այդ միջոցների կարիքն ունեցողների միջև:</p> <p>Ֆինանսական միջնորդը գործում է այդ ինստիտուցիոնալ միավորների համար, դիմելով ռիսկի՝ ձեռք բերելով ֆինանսական ակտիվներ և ընդունելով պարտավորություններ սեփական պատասխանատվությամբ: Բացի այդ, ֆինանսական միջնորդները կարող են ներդնել սեփական ֆինանսական ռեսուրսներն ու ոչ ֆինանսական ակտիվները, ներառյալ անշարժ գույքը:</p> <p>Միայն անշարժ գույքի հետ գործառնություններ իրականացնող կազմակերպությունները չեն ներառվում «Ֆինանսական կազմակերպություններ» հատվածում:</p> <p>«Ֆինանսական կազմակերպություններ» հատվածը ներառում է՝</p> <ul style="list-style-type: none"><li>• Կենտրոնական բանկը,</li><li>• Այլ ավանդային կազմակերպությունները,</li><li>• Այլ ֆինանսական միջնորդներ, բացառությամբ ապահովագրական կազմակերպությունները և կենսաթոշակային հիմնադրամները,</li><li>• Օժանդակ ֆինանսական կազմակերպությունները,</li><li>• Ապահովագրական կազմակերպություններ և</li></ul>
--	--	---

		կենսաթոշակային հիմնադրամները:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p><b>Հիմնական հասկացություններ</b></p> <p>Ֆինանսական համակարգի ընդհանրական ցուցանիշներում ներկայացնում են փոխհարաբերությունները (պահանջները և պարտավորությունները) արտաքին աշխարհի հետ, պահանջները տնտեսության մյուս հատվածների՝ կառավարության և իրական հատվածի նկատմամբ, ինչպես նաև ֆինանսական համակարգի իրացվելի պարտավորությունները:</p> <p>Ֆինանսական հատվածի մեջ ընդգրկվող սուբյեկտների փոխադարձ պահանջներն ու պարտավորությունները զտվում են միմյանցից, որպեսզի ամփոփ հաշվեկշիռն արտահայտի ֆինանսական հատվածի ընդհանուր փոխհարաբերությունները տնտեսության մյուս հատվածների հետ:</p> <p>Ֆինանսական համակարգի զուտ արտաքին ակտիվները (ՉԱԱ) ներկայացնում են կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվների հանրագումարը: Չուտ ներքին ակտիվները ներկայացնում են կառավարության նկատմամբ զուտ պահանջների, տնտեսության իրական հատվածի նկատմամբ համախառն պահանջների և զուտ այլ ակտիվների գումարը:</p> <p>Կառավարության նկատմամբ զուտ պահանջները ներկայացնում են կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների զուտ պահանջների հանրագումարը Տնտեսության իրական հատվածի նկատմամբ պահանջները հաշվարկվում են որպես տնտեսության իրական հատվածի նկատմամբ կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների պահանջների հանրագումար:</p> <p>Չուտ այլ ակտիվները հաշվարկվում են որպես բանկային համակարգի և վարկային կազմակերպությունների զուտ այլ ակտիվների հանրագումար: Այսպիսով, ֆինանսական համակարգի պարտավորություններում ընդգրկվում են փողի</p>

		<p>զանգվածի տարրերը (բացառությամբ վարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների) և վարկային կազմակերպությունների իրացվելի պարտավորությունները:</p> <p>Ֆինանսական համակարգից դուրս կանխիկը ԿԲ-ից դուրս կանխիկի և առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների դրամարկղերում առկա ՀՀ դրամի տարբերությունն է:</p> <p><b>Աշխարհագրական ընդգրկունություն</b></p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետությունը:</p> <p><b>Հրապարակման խմբավորումներ</b></p> <p>Ֆինանսական համակարգի (ներառյալ ՀՀ ԿԲ-ն, առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները) ամփոփ հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Չուտ արտաքին ակտիվներ</li> <li>2. Չուտ ներքին ակտիվներ <ol style="list-style-type: none"> <li>2.1 Չուտ պահանջներ ՀՀ կառավարությանը</li> <li>2.2 Պահանջներ տնտեսությանը</li> <li>2.3 Այլ ակտիվներ (զուտ)</li> </ol> </li> </ol> <p>Ֆինանսական համակարգի իրացվելի պարտավորություններ</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Կանխիկը ֆինանսական համակարգից դուրս</li> <li>2. Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով</li> <li>3. Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով</li> <li>4. Արտարժույթային ավանդներ</li> <li>5. Վարկային կազմակերպությունների ներգրավված փոխառություններ</li> </ol>
<b>2. Ժամանակայնություն</b>		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Եռամսյակային
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տվյալները հրապարակվում են հաշվետու եռամսյակին հաջորդող 60/61-րդ օրը, իսկ տարեկան ցուցանիշները՝ հաջորդող տարվա մայիսի 31-ին:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և

		սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Եռամսյակային
<b>3 .Ճշգրտություն</b>		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:
3.2	Անճշտության աղբյուրները	Ֆինանսական հատվածի բոլոր կազմակերպություններն ընդգրկված են Արմստատի համար վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ ԿԲ հաշվառման դաշտում:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Անճշտության աղբյուրներ, այդ թվում՝ թերհաշվառման, առկա չեն:
<b>4 .Համադրելիություն</b>		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Վիճակագրությունը վարվում է Արժույթի միջազգային հիմնադրամի «Դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն» ձեռնարկի մեթոդաբանությամբ, որի հիմնական հասկացությունները համաձայնեցված են «Ազգային հաշիվների համակարգ 1993» ձեռնարկի հասկացություններին:  Վերջին 20 տարիների ընթացքում չնչին փոփոխություններ են տեղի ունեցել ֆինանսական հատվածի վիճակագրության բնագավառում:  Ընդգրկված են ՀՀ կենտրոնական բանկի և առևտրային բանկերի ցուցանիշները, իսկ 2008 թվականից սկսած՝ նաև վարկային կազմակերպությունների ցուցանիշները:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա չէ
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Տվյալները ճշգրտվում են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքների ներառման հիման վրա:  Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:
<b>5 .Մատչելիություն</b>		
5.1	Տարածման ձևաչափ	<b>Հրապարակումներ</b> Եռամսյակային հրապարակումներ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի (հայերեն և ռուսերեն) յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա

		<p>հրապարակումներում:</p> <p>Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական տեղեկագիր (հայերեն, անգլերեն):</p> <p><b>Տվյալների բազա</b></p> <p><a href="http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</a></p> <p><b>Ինտերնետային հասցե</b> Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82</a>:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Փաստաթղթավորում	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=373">https://www.armstat.am/am/?nid=373</a> :
5.4	Այլ տեղեկատվություն	Մեթոդաբանական պարզաբանումներ առկա են նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, ինչպես նաև համապատասխան թեմատիկ հրապարակումներում:
Տարեկան հրապարակումներում ներառվում են տարեկան տվյալներ վերջին 4-5 տարիների համար:		
<b>6. Լրացուցիչ փաստաթղթավորում</b>		
6.1		Լրացուցիչ փաստաթղթավորում առկա չէ: